

2014

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ






ԵՐԵՎԱՆ



Սիրելի համաքաղաքացիներ.

Յուրաքանչյուր քաղաքում հարմարավետ կենսակերպը պայմանավորված է բարեկարգ փողոցների և բակերի, գեղատեսիլ այգիների և պուրակների, ժամանակակից չափանիշներին համապատասխանող կրթօջախների և բուժհաստատությունների, թանգարանների և պատկերասրահների, նաև՝ մանկական խաղահրապարակների, մշակույթի, մարզական և առևտրի կենտրոնների, այլ ենթակառուցվածքների առկայությամբ:

Երևանի քաղաքային իշխանությունների վերջին տարիների գործունեությունն ուղղված է քաղաքային տնտեսության արդյունավետ կառավարման, քաղաքային ենթակառուցվածքների կայուն և բնականոն զարգացման, քաղաքային միջավայրի բազմազանության, քաղաքացիների համար կյանքի և գործունեության որակի բարձր չափանիշների ապահովմանը՝ քաղաքի համաչափ զարգացման համատեքստում:

Այս տարվա ընթացքում իրականացված ծրագրերի շնորհիվ երևանցիներին է ներկայանում ավելի բարեկարգ և հարմարավետ, ավելի լուսավոր քաղաք, ավելի լավ Երևան:

Ես սա ասում եմ հպարտությամբ, բայց և գիտակցում եմ, որ ծրագրերի և կատարված աշխատանքների անաչառ ու վերջնական գնահատականն, իհարկե, քաղաքի հոգսերով ապրող երևանցիներինն է:

Համոզված եմ՝ միասնական հոգածությամբ և նվիրումով մեր քաղաքամայր Երևանին կտանք մեր սրտերի ջերմությունը և յուրաքանչյուր տարի այն կդարձնենք ավելի հարմարավետ, ավելի բարեկարգ և ավելի գեղեցիկ:

Վստահեցնում եմ ձեզ, որ հետևողական աշխատանքի և ամենօրյա ջանքերի շնորհիվ աշխարհի ամենահին մայրաքաղաքներից մեկը մոտ ապագայում կլինի նույնքան ժամանակակից և հարմարավետ, կունենա նույնչափ արդիական ենթակառուցվածքներ, ինչպես զարգացած այլ երկրների մայրաքաղաքները:

Երևանի քաղաքապետ՝

Տ. Մարգարյան






2014 թվականին Երևան քաղաքում իրականացված քաղաքաշինական ծրագրերը ուղղված են եղել մայրաքաղաքի կենտրոնական հատվածի բեռնաթափմանը, հետիոտնի անվտանգ տեղաշարժի, վթարային շենքերի բնակիչների խնդիրների լուծմանը:

1 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2014





ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում շահագործման են հանձնվել.

Լենինգրադյան փողոցից մինչև Իսակովի պողոտա ձգվող 5.2 կմ երկարությամբ նոր ավտոմայրուղին, որը Երևանի կենտրոնը բեռնաթափող ընդհանուր ճանապարհագծի մասն է և իրար է կապում 3 վարչական շրջան: Նորակառույց ճանապարհի առանձնահատկություններից են արդի ենթակառուցվածքները (ուղեանց, թունելային անցում), շուրջ 5 հա կանաչապատ տարածքը, ինչպես նաև ժամանակակից և էներգախնայող արտաքին լուսավորության համակարգը:

Ուլնեցի-Ռուբինյանց փողոցները միացնող նոր ավտոճանապարհը՝ շուրջ 2,5 կմ երկարությամբ: Ճանապարհը նպաստում է Ռուբինյանց փողոցի ծանրաբեռնվածության թեթևացմանը, ինչպես նաև կառուցվող ճանապարհի հարակից տարածքների համար ենթակառուցվածքների ձևավորմանը:



Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրով սկսվեցին խորհրդային տարիներից մայրաքաղաքի Գլխավոր հատակագծով նախատեսված Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքները: Ծրագրի առաջին փուլով իրականացվում է.

Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի Արշակունյաց պողոտա-Արտաշատի խճուղի հատվածի կառուցումը՝ ապահովելով Երևան քաղաքի հարավային պատշաճ մուտքը: 2014թ. ավարտվեց առաջին փուլի Արշակունյաց պողոտա -Շիրակի փողոց հատվածի վերակառուցումն ու լայնացումը՝ 1,3 կմ երկարությամբ:





Գլինկայի փողոցը Տիգրան Մեծ պողոտային միացնող ճանապարհային հատվածը, որը հանդիսանում է Սարալանջի փողոցի շարունակությունը: Այն իրենից ներկայացնում է կամրջային անցում Արտաշատի ջրանցքի վրայով: Դրա շնորհիվ բարելավվել է նշված հատվածի տրանսպորտային երթևեկությունը և բեռնաթափվել է Տիգրան Մեծ պողոտա-Քաջազնունի փողոց ծանրաբեռնված խաչմերուկը:

Տերյան փողոցի շարունակությունը՝ 80 մետր երկարությամբ, որը, ամբողջացնելով փողոցը, Գլխավոր պողոտայի հատման հատվածը միացրեց Ամիրյան փողոցին: Դրա հետևանքով բարելավվեց հարակից փողոցների տրանսպորտային երթևեկությունը:

Ծրագրի իրականացումը նախատեսում է թունելների, ուղեանցերի կառուցում, բոլոր ենթակառուցվածքների փոխարինում (ջրագծեր, կոյուղատարներ, էլեկտրագծեր և այլն), ինչպես նաև ժամանակակից և էներգախնայող լուսավորության համակարգի առկայություն:

Երևանի բյուջետային միջոցների հաշվին կառուցվել է.

Նորքի 8-րդ և 9-րդ զանգվածները միացնող Վիլնյուսի փողոցի շարունակությունը՝ շուրջ 500 գծամետր երկարությամբ: Երկար տարիներ սպասված այս ծրագիրը տրանսպորտային հոսքերին հնարավորություն կտա առանց երկար շրջանցման տեղափոխվել մի զանգվածից մյուսը:








Քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների բնակարանային խնդրի լուծում

Համայնք-պետություն համագործակցության շրջանակներում սկսվել են 4 բազմաբնակարան շենքերի կառուցման աշխատանքները: Դրանց շարունակական ավարտը նախատեսվում է 2015թ.: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է բնակարաններով ապահովել Երևան քաղաքում 01.01.2014-ի դրությամբ հաշվառված 4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բոլոր բազմաբնակարան շենքերի և հանրակացարանների բնակիչներին:

Ծրագրի առանձնահատկություններից է այն, որ բոլոր շենքերը՝ Շինարարների 6, Շինարարների 15, Մարգարյան 45, Սիսակյան 16 հասցեներում, կառուցվում են նախկին վթարային շենքերի տեղում: Ծրագրի իրագործման շնորհիվ կլուծվի շուրջ 450 ընտանիքների՝ տևական ժամանակ անլուծելի համարվող խնդիրը:

Վերգետնյա հետիոտն անցումներ

Համայնք-մասնավոր համագործակցության ներդրումային ծրագրերի շրջանակներում հետիոտնի անվտանգ տեղաշարժի ապահովման նպատակով Երևան քաղաքում 2014թ. կառուցվել և շահագործման է հանձնվել 3 վերգետնյա անցում՝ Կիևյան և Չարենց փողոցներում, Թբիլիսյան խճուղում:









Բարեկարգման ոլորտում լուծվել են տարիներով կուտակված բազմաթիվ խնդիրներ: Այն ներառում է բնակչության հարմարավետ ապրելակերպի եւ կենսապահովման բաղադրիչներ, ուստի 2014թ. դիտվել է որպես գերակա ուղղություն, որի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալները վկայում են այդ մասին:



7 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2014



Բակային տարածքների բարեկարգում

2014 թվականին մայրաքաղաքում բարեկարգվել է 236 բակային տարածք, ընդ որում՝ շատ դեպքերում զավթած տարածքների հաշվին՝ բակերը վերադարձնելով բնակիչներին:

Կառուցվել և կահավորվել է 289 խաղահրապարակ:

Կառուցվել է արհեստական խոտածածկով մինի ֆուտբոլի 15 դաշտ, ինչպես նաև վերանորոգվել է նախորդ տարիներին կառուցված մինի ֆուտբոլի շուրջ 60 դաշտ:









2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼ Է 600 ԲԱԿ





Բազմաբնակարան շենքերի վերանորոգում և հիմնանորոգում

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ համատեղ 2014թ. իրականացվել են Երևան քաղաքի բազմաբնակարան ավելի քան 700 շենքերի հարթ տանիքների 75 028 քմ, ինչպես նաև 776 թեք տանիքներով շենքերի 49 947 քմ վերանորոգման կամ մասնակի նորոգման աշխատանքներ: Դրանցից 19 շենքերի թեք տանիքներ հիմնանորոգվել են ամբողջությամբ: Նույն համագործակցության շրջանակներում ամբողջությամբ վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի 815 շքամուտքեր:

Մայրաքաղաքում առանձնակի ուշադրություն է դարձվել վթարային շքապատշգամբներին, ամրացվել և նորոգվել է 475 պատշգամբ: Իրականացվել են 35 շենքերի ճակատային մասերի նորոգման և մաքրման, 4 շենքերից թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումներ: Բազմաբնակարան շենքերում իրականացվել են նաև շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի 17 925 գծամետր վերանորոգման աշխատանքներ:







Փողոց-բակային տարածքների ասֆալտապատում

Երևան քաղաքի փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2014թ. իրականացվել են շուրջ 1 մլն. 100 000 քմ ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որից 600 000 քմ՝ բակային տարածքներում:


Միաժամանակ իրականացվել են 23 փողոցների շուրջ 500 000 քմ ասֆալտբետոնե ծածկի, շուրջ 100 000 քմ մայթերի հիմնանորոգման և շուրջ 50 000 գծամետր եզրաքարերի փոխարինման աշխատանքներ:

Իրականացվել է նաև մայթերի և պուրակների շուրջ 35 000 քմ սալիկապատում, կատարվել են շուրջ 50 000 քմ ասֆալտբետոնե ծածկերի վերանորոգման աշխատանքներ:
Հիմնանորոգվել և ասֆալտապատվել են 25 000 քմ հողային պաստառներով ճանապարհներ:

Հենապատեր

Կատարվել են 11 վթարային հենապատերի հիմնանորոգման և 14 հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

ԹԵՔԱՀԱՐԹԱԿՆԵՐԸ ԹՎԵՐՈՎ



Թեքահարթակների և հարմարեցումների կառուցում

Մայրաքաղաքում կենսապայմանների հարմարավետության և մատչելիության ապահովման ծրագրերի շրջանակներում Երևանի բյուջեի միջոցներով կառուցվել է 330 թեքահարթակ, ինչպես նաև մասնավոր կառույցների սեփականատերերի համագործակցությամբ՝ 300 թեքահարթակ: Այլ ծրագրերի, մասնավորապես փողոցների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում կառուցվել է 341 թեքահարթակ:






Արտաքին լուսավորություն

Չլուսավորվող 24 փողոցներ 2014թ. ապահովվել են արտաքին լուսավորության համակարգով: Միաժամանակ բանակցություններ են վարվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ՝ մնացած չլուսավորվող փողոցները լուսավորելու, էներգախնայող համակարգի անցում կատարելու և անվտանգությունն ու արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:







2014 թվականին մայրաքաղաքի կոմունալ տնտեսությունը նույնպես ունեցել է աստիճանական զարգացում՝ որոշ խնդիրների շուրջ ազդարարելով համալիր զարգացումների մեկնարկը:

3 ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2014





Աղբահանություն

2014 թվականը առանձնացավ բնակչության ամենահուզող խնդիրներից մեկի՝ աղբահանության կարգավորմանն ուղղված գործնական քայլերի ձեռնարկմամբ: Ժամանակակից չափորոշիչներով աղբահանություն իրականացնելու նպատակով իր աշխատանքները սկսեց միջազգային մրցույթով ընտրված օպերատորը Կենտրոն վարչական շրջանում: Անցումային փուլի ավարտից հետո գործընթացը աստիճանական կծավալվի մյուս վարչական շրջաններում:


Իրականացված ծրագրի շրջանակներում Կենտրոն վարչական շրջանում տեղադրվեցին եվրոպական արտադրության աղբամաններ, համապատասխան մեքենասարքավորումները փոխարինվեցին եվրոպական մեքենաներով, ներդրվեցին աղբահանության կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեխանիզմներ:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2014 թվականին լայնածավալ աշխատանքներ կատարվեցին ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էներգամատակարարման հուսալիության բարձրացման ուղղությամբ:

Մասնավորապես, իրականացվել են 34 883 գծամետր ջրամատակարարման և կոյուղատար համակարգի վերանորոգման աշխատանքներ: Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում սկսվել են շուրջ 18 կմ ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի հիմնանորոգման, շուրջ 10 000 կետերում ջրամիացումների առանձնացման և 15 կմ մայր ջրատարների վերակառուցման աշխատանքները: 2014 թ. ջրամատակարարման ոլորտում Երևան քաղաքի 70 տոկոսն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, իսկ 30 տոկոսի պարագայում այն կազմում է 17-23 ժամ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման աշխատանքները սկսելու ուղղությամբ:





ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԱՅՍՕՐ



Իրականացվել են 10 887 գծամետր գազիֆիկացման, ինչպես նաև շուրջ 22 500 գծամետր էներգամատակարարման համակարգի նորոգման աշխատանքներ:

Այս ոլորտի բոլոր բաղադրիչներով ձեռքբերումների համեմատական ցուցանիշներն էականորեն գերազանցում են ցանկացած մեկնակետի, այդ թվում՝ խորհրդային տարիների ցուցանիշները:



Ինչպես 2014 թ., այնպես էլ նախորդ եւ հաջորդ տարիների համար ոլորտը դիտվում է որպես գերակայություն, եւ այս համատեքստում մայրաքաղաքի կանաչ տարածքների պահպանման եւ ավելացման ուղղությամբ իրականացվել են լայնածավալ աշխատանքներ:



4 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2014



Իրականացվել են 60 000 ծառերի և թփերի տնկման, 65 000 ծառերի կրապատման, 23 000 ծառերի էտման և 32 000 ծառերի բուժման աշխատանքներ:

ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ

2014թ. Երևան քաղաքի 5 հատվածներում ստեղծվել և վերակառուցվել են շուրջ 11.6 հա մակերեսով նոր զբոսայգիներ

- «Մալաթիա» զբոսայգի
- Նոր Նորք վարչական շրջանի 5-րդ զանգվածի զբոսայգի
- Ամերիկյան համալսարանին կից զբոսայգի
- Գլխավոր պողոտայի Նալբանդյան-Հանրապետության փողոցների միջանկյալ հատվածի զբոսայգի
- Լվովյան փողոցով և Գայի պողոտայով պարփակված ջրաշխարհի հարևանությամբ զբոսայգի
- Մանկական զբոսայգի

Հանգստի գոտիների վերակառուցման և ստեղծման ծրագրերի շրջանակներում մեծ ուշադրություն է դարձվում նոր շատրվանների և ցայտաղբյուրների տեղակայման և հների վերագործարկման աշխատանքներին, ինչի շնորհիվ 2014թ. Երևան քաղաքում գործող շատրվանների թիվն ավելացավ 4-ով, իսկ ցայտաղբյուրներինը՝ 11-ով:





ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Ստեղծվել են շուրջ 5 հա սիզամարգեր, կատարվել են 12 հա սիզամարգերի բարելավման աշխատանքներ, քաղաքը ծաղկապատվել է 2 100 000 ծաղկասածիլներով, ինչպես նաև տեղադրվել են 110 գեղարվեստական կոմպոզիցիաներ:

Մայրաքաղաքում 2014թ. ստեղծվել է 22 կմ ոռոգման ցանց, իրականացվել են շուրջ 10 կմ ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:





Երևանի քաղաքապետարանի 2014թ. ծրագրերն առաջնահերթության կարգով ուղղված են եղել Երևանի ենթակայության կրթական կազմակերպություններում ուսուցման արդյունավետության բարձրացմանը նպաստող պայմանների բարելավմանը:



5 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 2014



ՇՈՒՐՋ 30 000 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի բյուջեի միջոցներով ապահովվել է քաղաքապետարանի ենթակայության 160 մանկապարտեզներում շուրջ 30 000 երեխաների անվճար նախադպրոցական ուսուցումը:
Քաղաքապետարանի համար գերակա համարվող շարունակական ծրագրի շրջանակներում հաշվետու տարում քաղաքի համաչափ զարգացման սկզբունքի կիրառմամբ իրականացվել են 23 մանկապարտեզների հիմնանորոգման և վերանորոգման և 19 մանկապարտեզներում՝ ընթացիկ նորոգման աշխատանքներ:
Նախադպրոցական ուսուցման կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով 160 մանկապարտեզներում իրականացվել է անհրաժեշտ գույքի թարմացում:
Ծրագիրն ունի շարունակական բնույթ:








ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում Երևանի 159 դպրոցներում կազմակերպվել է 84 790 աշակերտների կրթությունը, այդ թվում՝ 1525 աշակերտների ներառական կրթությունը:
Իրականացվել են նաև աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով:
Դպրոցներում կազմակերպվել են առարկայական օլիմպիադաներ, հոբելյանական միջոցառումներ, ասմունքի և այլ մրցույթներ:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ





Քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում է նաեւ մայրաքաղաքի մշակութային եւ մարզական կյանքը բովանդակալից եւ հագեցած դարձնելու կարեւորագույն խնդիրը, որի շրջանակներում իրականացվել են հետեւյալ աշխատանքները.



ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

2014



ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է 12 ԳՐԱԴԱՐԱՆ, ԳՐՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՀԱՐՍՏԱՑԵԼ Է 30 500 ԳՐՔՈՎ:

- Երաժշտական, արվեստի, շախմատի դպրոցներում, մանկապատանեկան և ստեղծագործական կենտրոններում և սպորտդպրոցներում կազմակերպվել է 22 500 երեխաների արտադպրոցական ուսուցումը:



- Հիմնանորոգվել է 12 գրադարան, գրքային ֆոնդը հարստացել է 30 500 գրքով:



- Հիմնանորոգվել և վերանորոգվել են արվեստի, սպորտի, երաժշտական շուրջ 20 դպրոցներ և արվեստի տներ:

- Ապահովվել է Երևանի ենթակայության 3 թատրոնների և 4 թանգարանների բնականոն աշխատանքը:





- Երևան քաղաքում կազմակերպվել են քաղաքային շուրջ 30 միջոցառումներ՝ համերգներ, փառատոններ, այդ թվում՝ «Երևանյան ամառ» ծրագիրը, «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը:



- Մայրաքաղաքում 2014թ. հիմնվել է շախմատի 5 դպրոց:

- Լուծվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության սպորտդպրոցների ջեռուցման խնդիրը:



- Իրականացվել է Երևանի կենդանաբանական այգու վերակառուցման համալիր ծրագրի 2014թ. համար նախատեսված հատվածը, որի շնորհիվ կենդանաբանական այգին 2015թ. նորովի կներկայանա մեր քաղաքացիներին:



Քաղաքային մշակույթի կարեւոր տարրի՝ քաղաքային կահավորանքի եւ ձեւավորման ծրագրի իրականացման շնորհիվ Երեւանում գերիշխող է դառնում յուրահատուկ ոճ, որը գնահատում են երեւանցիները եւ մայրաքաղաքի հյուրերը: Մեր քաղաքը դարձել է ավելի գրավիչ եւ ավելի հարմարավետ:



7 ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2014



ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

2014թ. մայրաքաղաքում շարունակվել է քաղաքային կահավորման ծրագիրը: Երևանը համալրվել է քաղաքային միջավայր ձևավորող և մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հարմարավետությունն ապահովող նորառոճ նստարաններով և աղբամաններով, փողոցների ուղենիշերով, ծառաբների մետաղական ճաղավանդակներով, ավտոբուսների նորառոճ կանգառասրահներով, գովազդային և տեղեկատվական նորառոճ վահանակներով, ժամացույցներով, ինֆոկետերով:

ԿԱՄԱՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇԵՆՔԵՐԻ ԳՈՒՆԱԶԱՐԴՈՒՄ

Երևան քաղաքի շուրջ 50 կամարանցումներում իրականացվել են 2011-2013թթ. վերանորոգված, գունազարդված կամարանցումների վնասված հատվածների վերանորոգման ու նկարազարդման աշխատանքներ: Վերանորոգվել է շուրջ 930 քմ, գունազարդվել է 290 քմ ընդհանուր մակերեսով կամարանցում:

2014թ. կատարվել են նաև 9 շենքերի ճակատային մասերի դեկորատիվ գունազարդման աշխատանքներ:

Վերանորոգվել է շուրջ 930 քմ, գունազարդվել է 290 քմ ընդհանուր մակերեսով կամարանցում:











8 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

2014

2014թ. մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի համակարգի հիմնախնդիրները կարգավորելու եւ ոլորտում արմատական բարեփոխումների ուղղությամբ ձեռնարկվել են քայլեր, որոնց արդյունքները տեսանելի կլինեն աստիճանաբար՝ առաջիկա տարիներին:











ՄԵՏՐՈՅԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ (մլն.)

Վերգետնյա հասարակական տրանսպորտի անվտանգության, հարմարավետության և արդյունավետության խնդիրը լուծելու նպատակով քաղաքապետարանը 2014թ. միջազգային խորհրդատվական կազմակերպության հետ միասին իրականացրել է իրագործե-լիության ուսումնասիրություն համակարգի բոլոր բաղադրիչների՝ ներառյալ երթուղային ցանցի վերակառուցման, ինչպես նաև միջնաժամկետ և երկարաժամկետ բարեփո-խումների ծրագրի մշակման վերաբերյալ:

Միջոցներ են ձեռնարկվել ներկա իրավիճակում նշված խնդիրները հնարավորինս կանոնա-կարգելու ուղղությամբ, մասնավորապես, գործ-նական քայլեր են արվել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոբուսների դիզելային շարժիչները աստիճանաբար բնական

շրջանում մետրոպո-լիտենի 2 նոր կայարանների կառուցման հնարավորությունների իրագործե-լիության ուսումնասիրություն:

Վերգետնյա հասարակական տրանսպորտի էկոլոգիապես մաքուր տեսակի՝ տրոլեյբուսի շահագործման արդյունավետությունն ապա-հովելու նպատակով բանակցություններ են վարվել միջազգային կազմակերպությունների հետ՝ ժամանակակից տրոլեյբուսներ ներկրելու և առկա երթուղային ցանցն ընդլայնելու համար:

Քաղաքապետարանի ենթակայության 10 ավտոբուսներում տեղադրվել են վերելակներ՝ դրանք առանձնահատուկ կարիքներով քաղաքա-ցիներին մատչելի դարձնելու նպատակով: Այդ տրանսպորտային միջոցների երթուղիները և չվացուցակները քննարկվել են շահագրգիռ ՀԿ-ների հետ:





սեղմած գազով աշխատող շարժիչների վերա-փոխելու, ինչպես նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների պահանջ-ներին տրանսպորտային միջոցները հարմա-րեցնելու ուղղությամբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական Միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ 2014թ. շարունակվել են Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման աշխատանքները, որոնք ուղղված են մայրաքաղաքի մետրոպոլիտենի գործող ուղեգծի շահագործման անվտանգության բարձրացմանը: Միաժամանակ նույն կազմա-կերպությունների աջակցությամբ պատվիրվել և իրականացվել է Երևանի Աջափնյակ վարչական





2014թ. առողջապահական ոլորտում քաղաքապետարանի ծրագրերն ուղղված են եղել առաջնային օղակի բուժհաստատությունների ապասարկման բարելավմանը:

- Երևանի բյուջեի միջոցներով վերանորոգվել և ջեռուցման համակարգերով են ապահովվել թիվ 15 և Սարի Թաղի պոլիկլինիկաները, ինչպես նաև վերանորոգման աշխատանքներ են կատարվել Կարմիր Բլուր պոլիկլինիկայում:




9 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2014

- Պոլիկլինիկաների համար ձեռք են բերվել և ըստ առաջնահերթության բաշխվել ժամանակակից բուժսարքավորումներ:

- Երևանի բյուջեի, ինչպես նաև Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների միջոցներով պարբերաբար իրականացվել են ակցիաներ, որոնց շրջանակներում շուրջ 28 000 սոցիալապես անապահով երևանցիների հնարավորություն է տրվել անցնել անվճար բուժհետազոտություն (այդ թվում՝ դժվարամատչելի), նրանցից 1913 քաղաքացիներ անվճար վիրահատվել են:





- Աջակցության կարիք ունեցող սիրիահայ 882 ընտանիքների տրամադրվել է նյութական և պարենային, 129 ընտանիքների՝ դրամական օգնություն:
- Մայրաքաղաքի 10 վարչական շրջաններում բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, որոնցից օգտվում են սոցիալական տարբեր խոցելի խմբերի շուրջ 2 400 քաղաքացիներ:
- Գիտելիքի օրվա առիթով 4947 սոցիալապես անապահով ընտանիքների 1-ին դասարան հաճախող երեխաների, ինչպես նաև Երևանի ենթակայության մանկապարտեզների ավարտական խմբեր հաճախող 8309 երեխաների տրամադրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Երևանաբնակ ժամկետային զինծառայողների շուրջ 2000 ծնողներ Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ հնարավորություն են ստացել տեսակցելու ՀՀ սահմանամերձ և Արցախի զորամասերում ծառայող իրենց զավակներին:
- Կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների 1170 երեխաների ամառային հանգիստը ճամբարներում:
- Էրեբունի-Երևան տոնակատարությունների շրջանակներում մայրաքաղաքի 2796 սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրվել է աջակցություն՝ կենցաղային և համակարգչային տեխնիկայի տեսքով: Զոհված և հաշմանդամ ազատամարտիկների և բազմազավակ 4 ընտանիքների հատկացվել են բնակարաններ:
- Ամանորյա միջոցառումների շրջանակներում 22 950 սոցիալապես անապահով անձանց, ինչպես նաև 37 578 երեխաների տրամադրվել են համապատասխանաբար սննդային և քաղցրավենիքի նվեր-փաթեթներ:



10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 2014

Երեւան քաղաքի սոցիալական ապահովության հաստատությունների գործունեության կազմակերպմանը զուգահեռ 2014թ. իրականացվել են բազմաթիվ սոցիալական ծրագրեր, որոնք ուղղված են եղել ըստ կարիքների գնահատման սոցիալական խմբերի հոգսերի թեթեւացմանը:





Երևանի ավագանին, հանդիսանալով Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինը՝ իր լիազորությունների շրջանակներում 2014թ. ծավալել է ակտիվ գործունեություն՝ ապահովելով մայրաքաղաքի բոլոր հիմնախնդիրների համակողմանի քննարկումը և որոշումների ընդունումը:

1 ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ


2014



- Գումարվել է 9 հերթական և 3 արտահերթ նիստ
- Հրավիրվել է 4 մշտական հանձնաժողովների 54 նիստ
- Ընդունվել է 276 որոշում, որոնցից 3-ը անցել է հանրային քննարկման և հանրային բաց լսումների փուլ
- Երևանի ավագանու որոշմամբ 4 հոգու շնորհվել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչում:



Կարինե Դանիելյան



Լևոն Արոնյան



Էդուարդ Թադևոսյան



Մերուժան Տեր-Գուլանյան

- Քույր կամ գործընկեր քաղաքների թիվը 2014թ. ավելացել է 6-ով՝ հասնելով 45-ի:
- Երևանի քաղաքապետարանն անդամակցել է «Տեղական իշխանությունները հանուն կայունության» ցանցին և Եվրոպական Միության «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությանը: Համագործակցությունը կնպաստի բնապահպանության և էներգախնայողության ոլորտներում մեծածավալ ծրագրերի իրակա-նացմանը:
- 6 գործընկեր քաղաքների հետ ստորագրվել են համագործակցության և փորձի փոխանակման ծրագրեր:
- 2014թ. դրությամբ Երևանը անդամակցում է միջազգային 8 կազմակերպության:
- «Էրեբունի-Երևան» տոնակատարությունների շրջանակներում հյուրընկալվել են պատվիրակություններ 37 գործընկեր քաղաքներից:





12 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

2014

2014թ. Երեւանի քաղաքապետարանն ընդլայնել է համագործակցությունը գործընկեր քաղաքների եւ միջազգային կազմակերպությունների հետ:





www.yerevan.am

